

ԴՈՆԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
բժշկական գիրք. թեկնածու

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊՆ ԸՍՏ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ-ԱՄԱՍԻԱՅՈՒ

Ազգաբնակչության առողջ կենսակերպի, հիվանդությունների կանխարգելման, առողջապահության եւ դրա ճիշտ կազմակերպման նպատակ հետապնդող կարևորագույն հիմնահարցերը հնագույն ժամանակներից ի վեր եղել են բժշկագիտության առաջնային խնդիրները: Դրա վկայությունը դեռ հին արեւելյան բժշկության մեջ այս խնդրի նկատմամբ շեշտված ուշադրության ու կանոնակարգված օրենքների առկայությունն է¹:

Դեռ արեւելյան քաղաքակրթության օրրան համարվող հին Եգիպտոսում հանգամանորեն մշակված էին անձնական հիգիենայի կանոնները. ըստ այդմ յուրաքանչյուր ոք պարտավոր էր կրել քաթանե մաքուր ներքնագգեստ, հաճախակի ընդունել լոզանք, մարմինը շփել տաք թուրքերով, ընդունել չափավոր սնունդ, ամիսը երեք անգամ օգտագործել փսխում առաջացնող եւ աղիները մաքրող միջոցներ²:

Առողջապահությանն ու հիգիենային առնչվող հարցադրումներն ավելի կապարյալ էին հնդկական բժշկության մեջ, որոնք իրենց համակարգված արտացոլումն են գրել Մանուի օրենսգրքում: Իրավական այս հուշարձանի խմբագրված տարբերակը, որ թվագրվում է Ք. ա. Բ. դար, ի թիվս այլ օրենսդրական կանոնների՝ պարունակում է նաեւ բնակչության բժշկական օգնության, անձնական եւ հասարակական հիգիենայի հստակ կանոններ³:

1 Մանիպարահիգիենիկ կանոնակարգի հնագույն հուշարձաններից է Բաբելոնի Նամուրասի թագավորի (Ք. ա. 2250 թ.) դարաստանագիրքը, որը հայտնաբերվել է Ի. դարասկզբին (1901 թ.) Սուր քաղաքի հնագիտական պեղումների ժամանակ: Օրենսդրական այս հուշարձանի մի շարք հոդվածներով մասնագիտական թերաքումների դեպքում բժշկին խիստ պարիժ էր սահմանվում (օրինակ՝ եթե հիվանդը մահացել է բժշկի մեղքով կամ եթե կարարակտան հետացնելիս վնասել է աչքը, բժշկին սպառնում էր ձեռքի անդամահատում). փնն **Փ. Бородулин**, *История медицины*, М., 1961, тз 36-37. **Т. Мейер Штейнер**, **К. Зудгоф**, *История медицины*, М., 1925, էջ 16):

2 Տե՛ս **С. Ковнер**, *История медицины*, ч. I, Киев, 1878, էջ 18:

3 Այսօրեղ հանգամանորեն շարադրված է տարվա եղանակների եւ կլիմայի անմիջական ազդեցությունը օրգանիզմի վրա (ամենաբարենպաստը համարվում էր չափավոր տաք կլիման), խորհուրդ էր փրվում արթնանալ վաղ առավոտյան, արամները լվանալ խոզանակով եւ հալոսկ փոշիներով, կրել մաքուր հագուստ, ընդունել լոզանք: Խստորեն հետեւում էին շուկաների եւ հասարակական վայրերի մաքրությանը: Կիրառվում էր հարուկ դրոյթ՝ քաղաքներից տարահանել բոբորությանը եւ ժանրախաբով հիվանդներին: Խախտողների նկատմամբ գործում էին պարժամիջոցներ: Առողջության պահպանման լավագույն միջոցներ էին համարվում ֆիզիկական վարժությունները եւ ճիշտ սննդակարգը՝ համապատասխան տարվա եղանակին. փնն **С. Ковнер**, *История медицины*, ч. I, էջ 63-65. **Н. Богоявленский**, *Индийская медицина в древнерусском врачевании*, Л., 1956, էջ 7-8, 16-17:

Չինացիները նույնպես համարվել են սանիտարահիգիենիկ մշակույթի ավանդույթի կրողներ, որի խոստուն վկան է չին ժողովրդի հնագույն գրական ժառանգության արժեքավոր հուշարձաններից մեկը՝ հիմների և երգերի «Շու-ցզին» հավաքածուն, որը թվագրվում է Ք. ա. ԺԱ.-Է. դարեր (ի դեպ՝ ավելի հին, քան հնդկական վեդաները, հունական «Ողիսականն» ու «Իլիականը»)՝

Անկասկած, բժշկագիտության այս բնագավառներն իրենց լիարժեք գիտական մեկնաբանումները գրան անրիկ՝ մասնավորապես հիպոկրատյան բժշկության մեջ: Ինչպես հայրնի է՝ հիպոկրատյան բժշկության երակները բժշկագիտության զարգացման կանխարգելիչ ուղղվածությունն էր: Թերևս սա է պարզապես, որ Հիպոկրատի՝ բժշկության փորձերն ճյուղերին նվիրված աշխատություններում պարբերաբար առնչվում ենք առողջության պահպանման և հիգիենայի մի շարք հարցադրումների: «Հիպոկրատյան հավաքածու»-ի «De victu» (Սննդառնմանի մասին), «De somniis» (Երազների մասին), «De salubri victu» (Առողջ ապրելակերպի մասին) հատորներում շեշտադրվում է այն իրողությունը, որ օրգանիզմի առողջ վիճակը պայմանավորված է սննդակարգի և մարմնի ֆիզիկական ուժի միջև եղած ճիշտ հարաբերակցությամբ:

Գիտողականությունը, բժշկական ընդգրկուն մտածողությունը, փրամաբանական ընդհանրություններ անելու մեծ ունակությունը Հիպոկրատին հնարավորություն ընձեռեցին բժշկագիտության վերը նշված ոլորտներին փալ լիարժեք բժշկագիտական մեկնաբանումներ, որոնք կողմնորոշիչներ դարձան մինչև ուշ միջնադար⁵:

4 Հնագիտական պեղումների և «Շու-ցզին» (Գիրք փարեցության) էպոսի քննությունը փաստում են սարկապիրական Չինաստանում բարձր զարգացման հասած հասարակական հիգիենայի գոյության իրողությունը (քաղաքների փողոցներն ու հրապարակները սալահատակ էին, բնակելի թաղամասերը փակված էին մաքուր աղբյուրներին հարակից, չոր, արևոտ փողոցներում, մեծ ուղաղություն էր դարձվում բնակարանի մաքրությանը): Ինչ վերաբերում է անձնական հիգիենային, այն առավելագույն մշակված է «Չանգ-սինգ» փրակապում (հեքիել մարմնի մաքրությանը՝ լոգանք ընդունել հինգ օրը մեկ անգամ, օգտագործել մաքուր սպիտակեղեն, ձեռքերը լվանալ օրը հինգ անգամ, հեքիել խոհանոցային պարագաների մաքրությանը): Տրակապում փեղ են գրել մի շարք այլ ուշագրավ առողջապահական ցուցումներ: Չինաստանում գործում էին նաև զինվորական հիգիենայի մշակված կանոններ: Ի դեպ՝ զինվորներին դաստիարակում էին պարերագմում լինել մարդասեր ոչ միայն յուրայինների, այլև թշնամու զորքերի նկատմամբ: Չինացիները առողջապահական նկատառումներով բնական կամ սեւ ծաղիկ հիվանդության դեմ ծաղկապարվաստումը (վարիոլացիա) կիրառել են դեռ Ք. ա. Ժ. դարում, երբ Յոմեյ-շանը առաջին անգամ բնական ծաղկով հիվանդ մարդու բշտի արտադրությունը յուրօրինակ եղանակով (քթանցքերի մեջ դնելով բշտի արտադրությամբ ներծծված բամբակի կամ կտորի մի շերտ) նախագգուշական պարվաստում կարարեց Չին-Յունգ կայսեր թոռանը (սին **С. Ковнер**, էջ 108, 111. БМЭ, т. 17, М., 1960, էջ 84-86):

5 Մասնավորապես Հիպոկրատյան «De victu» գործը ամբողջությամբ նվիրված է դիետոլոգիային՝ սննդակարգի խնդիրներին (ի դեպ՝ հին Նուսաստանում «dieta» բառն ընկալվում էր ոչ միայն որպես սննդակարգ, այլ նաև՝ ռեժիմ): Հիպոկրատյան դիետոլոգիայում հաշվի էր առնվում մարդու փաթիքը, փարվա եղանակը, մարմնի կառուցվածքը: Կարևորվում էր կերակրարեսակների ճիշտ ընդունությունը՝ զարեալությունից պարբաստված շիվները, մսարեսակներից՝ նապաստակի և թռչնի միսը, հեղուկներից՝ նախապարվությունը փրվում էր մաքուր ջրին, նաև՝ զինուն: Աշաղություն էր դարձվում օրգանիզմից արտաթորանքների ժամանակին արտազատմանը, խորհուրդ էր փրվում պարբերաբար օգտագործել մաքրող և փախում առաջացնող միջոցներ: Աղիների մաքրման լավ միջոց էր համարվում քայլերը, ինչպես նաև՝ սովորական թուլացնող միջոցները՝ էշի փաք կաթը, կաղամբը կամ կաղամբի հյութը, սպիտակ ճակնեղենը մեղրով:

Առողջապահության կազմակերպման և սանիտարահիգիենիկ միջոցառումների համակարգը նոր դրսևորումներ ունեցավ արաբական խալիֆայության երկրներում: Ամբողջ արևելքով մեկ բացվել էին հիվանդանոցներ ու դեղարաններ, որոնց դերը վարակական հիվանդությունների փարածումը կանխելու, բնակչությանը ժամանակին բժշկական օգնություն ցույց տալու և կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու գործում առավել բան կարեւորվում էր⁶: Նախորդ դարերի բժշկագիտական մարքի առավել գործնական ձեռքբերումները ժառանգած և դարեր շարունակ համաշխարհային բժշկագիտության մեջ առաջադասարի դերը ստանձնած արաբական բժշկագիտությունը, մասնավորապես ի դեմս Արևելքի մեծ մրաժող Իբն Սինայի, իր կարևոր ներդրումը բերեց նաև առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման ոլորտում⁷:

Անբիկ և արաբական բժշկագիտության մեջ առողջապահության կազմակերպման և սանիտարահիգիենիկ միջոցառումների մշակված համակարգն ամբողջությամբ փոխանցվեց միջնադարյան երոպական բժշկությանը: Արաբալեզու բժշկական մշակույթի լատիներեն թարգմանությունների շնորհիվ այդ սրելծագործությունները դարձան այն արաղծը, որի վրա հեղադայում պերք է զարգանար Արևմտյան Երոպայի բժշկագիտությունը: Թ.-ԺԳ. դարերում երո-

Առողջության պահպանման կարևորագույն պայման էր մարմնամարզությունը: Նույները կարևորում էին քնի ռեժիմը՝ այն մեկնաբանելով օրգանիզմում ընթացող կենսաբանական գործառնությունների երթարերսրում (հանգիստը քունը համարվում էր առողջության նախապայման, իսկ անհանգիստը քունը՝ լիարյուտության պերերարայի նախանշան): Նյարդերարյան բժշկության մեջ հերերողականորեն ապացուցվում է առողջ, ճիշտ ապրելակերայի դերը ոչ միայն առողջության պահպանման, այլև հիվանդությունների կանխարգելման և դրանց արդյունավեր բուժման պարագայում (տես **С. Ковнер**, *Очерки истории медицины*, вып. II, Гиппократ, Киев, 1883, էջ 237, 270-276, 306-308, 317-318, 324-326):

6 Արևելքում մեծ համբավ ունեին Բաղդադում բացված հիվանդանոցները (ԺԲ. դարի երոպացի մի ճանապարհորդ անցնելով Բաղդադով՝ հաշվել է մոտ 60 հիվանդանոց): Նիվանդանոցներ էին գործում նաև Ռեյ, Նաեպ, Իսպահան, Շիրազ քաղաքներում: Նիվանդանոցներում, բացի ընդհանուր բուժյթի հիվանդությունների համար նախարեակած բաժանմունքներից, գործում էին առանձին մեկուսացված հիվանդասենյակներ՝ վարակական հիվանդությունների համար: Այս հիվանդանոցներում, ի նմանություն ժամանակակից կլինիկական հիվանդանոցների, բժիշկ ուսանողները սրանում էին գործնական բժշկական ուսուցում (**А. Кадыров, У. Саипов**, *Абу Бекр Рази*, Ташкент, 1963, էջ 7-8, 11-12):

7 Առողջության պահպանման կարևորագույն խնդիրն այսպես է ձևակերպում Արևելքի մեծագույն իմաստասեր Իբն Սինան. «Մենք ատում ենք, որ առողջության պահպանման հիմքում ընկած են յոթ հիմնական գործոն. 1) խառնվածքի (տեմպերամենտ) հավասարակշռություն, 2) ընդունվող սննդի և հեղուկի ճիշտ ընրություն, 3) մարմնի մաքրում ավելցուկներից, 4) մարմնի ճիշտ կազմվածքի պահպանում, 5) շրջակա միջավայրի մաքրություն, 6) հագուստի ճիշտ ընրություն և 7) ֆիզիկական և հոգեկան գործառնությունների հավասարակշռություն» (**Абу Али ибн Сина**, *Канон врачебной науки*, кн. I, Ташкент, 1981, էջ 297): Արաբական բժշկության մեջ առողջության պահպանման գործընթացում կարևորվում էր երեք հիմնական բաղադրիչ՝ սննդակարգ, մարմնի կուրվածություն և քնի ռեժիմի պահպանում: Ուշադրություն էր դարծվում սննդարեսակի ճիշտ ընրությանն ու որակին, քանզի դրանով էր պայմանավորվում օրգանիզմում նյութափոխանակության ճիշտ ընթացքը: Բնջ վերաբերում է խմելու ջրի որակին, խորհուրդ էր տրվում օգրագործել կավային գերահուռով, քարերի վրայով հոսող առուների ջուրը, որը հարուստ էր երկայթի աղերով, իսկ կայթի դեպքում՝ օգրագործել այն կենդանիների կայթը, որոնց հոլիության րետողությունը մոտ է կնոջ հոլիության ընթացքին: Առողջության պահպանմանը նյատարող գործոն էր համարվում քնի ճիշտ ռեժիմը. լավագույնն էր համարվում խորը, հանգիստ, ջրնդհարվող քունը, որն ամրացնում է կենսական ուժերը, հանում նյարդային և հոգեկան լարվածությունը (տես **Абу Али ибн Сина**, Ташкент, 1981, էջ 82-92. **Ю. Арзуметов, К. Юлдашев**, *Медицинские взгляды Ибн Сины*, Ташкент, 1983, էջ 84-93):

պական մի շարք քաղաքներում (Սալերնո, Պադուա, Փարիզ, Մոնպելյե, Բոլոնիա, Օբաֆորդ) բացված համալսարանների մեջ առանձնանում էր Սալերնոյի համալսարանը, իր նույնանուն՝ Սալերնոյի բժշկական դպրոցով: Դարեր շարունակ միջնադարյան արեւմտաեւրոպական բժշկագիտության համար կողմնորոշիչ հանդիսացող այդ դպրոցի բժշկագիտական ուղղվածությունը հիմնականում առնչվում էր առողջ ապրելակերպի, հիվանդությունների կանխարգելման և դիետոլոգիայի հիմնախնդիրներին, որոնք լավագույնս արտացոլվել են ԺԱ. դարում ստեղծված «Սալերնոյի առողջապահական կոդեքսում»⁸:

Արեւմտյան Եւրոպայում առողջապահության արդյունավետ կազմակերպման գործում մեծ դեր ունեցան մի շարք խոշոր քաղաքներում բացված հիվանդանոցները (Լիոնում՝ Զ. դար, Փարիզում՝ Է. դար, Hotel-Die (Աստծո տուն) անվամբ, որը, ի դեպ, գործում է մինչ այսօր, Լոնդոնում՝ ԺԲ. դար, ս. Բարդոլդեմիոս անվամբ) և վանքերին կից գործող ապաստարանները⁹:

Միջնադարյան Եւրոպայում վարակական հիվանդությունների պանդեմիաների պարբերաբար բռնկումները վերածվել էին աղետի: Մասնավորապես՝ 1348 թ. ժանրախաբի (սև մահ) համաճարակը եւրոպական մի շարք քաղաքների (Վիեննա, Փարիզ, Մարսել, Լոնդոն, Ֆլորենցիա և այլ) բնակչության գրեթե 9/10 մասի մահվան պատճառ դարձավ: Եւրոպայում 25.000.000 մարդկային կյանք տարած այս աղետի դեմ պայքարելու համար շրապ սանիտարահիգիենիկ գործուն ձեռնարկումներ էին անհրաժեշտ: Իտալիայի և հարավային Ֆրանսիայի Միջերկրական ծովի նավահանգիստներում հայտարարվեց քառասունօրյա մեկուսացման շրջան, որի իրականացմանը հետևում էին հատուկ հոգաբարձու հսկիչներ, որոնց պարտականությունների մեջ էին մտնում սպասարկող բուժական անձնակազմի մեկուսացման, ժանտախտով հիվանդների հագուստի և անկողնու ախտահանման (ընդհուպ՝ դրամական միջոցների այրման) հսկողությունը: Ի դեպ՝ այս համաճարակի ականաբեւեռներ Պեդրարկայի և Բոկաչչոյի գեղարվեստական գործերում առկա են այդ աղետալի համաճարակի պատկերավոր նկարագրությունները¹⁰:

Վարակական հիվանդությունների բնույթը պարզելու և տվյալ ժամանակաշրջանի, ինչպես նաև համաճարակագիտության հերազա գարգացման համար կարևորագույն բժշկագիտական ձեռքբերում էր Պադուայի համալսարանի պրոֆ. իտալացի Զիրոլամո Ֆրակաստորոյի (1478-1553) «De contagione et

8 Այդ կոդեքսի՝ իսպանացի բժիշկ-ալքիմիկոս Արնոլդ Վիլանովացու «Regimen sanitatis Salernitanum» (Սալերնոյի առողջապահական կոդեքս) կամ «Medicina Salernitana» (Սալերնոյի բժշկություն) մեկնաբանություններում առկա են առողջության պահպանման (սննդակարգի, քնի, աշխատանքային և ֆիզիկական պարարաստվածության ռեժիմի) վերաբերյալ գործնական բնույթի որոշակի հանձնարարականներ: Բանաստեղծական ժանրով շարադրված այդ ստեղծագործությունն առաջին անգամ հրատարակվել է 1480 թ., որից հետո թարգմանվել է եւրոպական մի շարք լեզուներով (Арнольд из Виллановы, Салернский кодекс здоровья, М., 1964, էջ 16-20):

9 Տե՛ս V. Robinson, The story of medicine, New York, 1944, էջ 138:

10 Տե՛ս անդ, էջ 231-233:

contagiosis morbis et curatione libri tres» (Վարակի, վարակական հիվանդությունների և նրանց բուժման մասին) աշխարհությունը, որտեղ հեղինակը մաքրանալու է վարակական հիվանդությունների փոխանցման երեք ուղիները՝ սպեցիֆիկ հարուցիչներ, որ նա անվանում էր «վարակի սերմեր», հիվանդի և առողջի անմիջական շփում և վարակի փոխանցում փարածության վրա¹¹:

Ահա հենց այդ նույն ժամանակաշրջանում (ԺԵ. դար) Արևելքում, մասնավորապես Կ. Պոլսում, իր բժշկագիտական գործունեությունն էր ծավալում փառանդավոր հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին: Նրա բազմաբնույթ մաքրանագրական ժառանգությունը ժամանակակից ուսումնասիրողին հնարավորություն է ընձեռում փարբեր փեսանկյուններից կրկին ու նորովի անդրադառնալ մեծ բժշկապետի բժշկագիտական փարբեր ընկալումներին, մասնավորապես՝ բժշկագիտության համար այսօր եւս արդիական համարվող առողջության պահպանման հիմնախնդրին: Անվիճելի է, որ հայ բժշկապետը, պահպանելով արեւելյան և անարիկ բժշկության լավագույն ավանդույթները, միաժամանակ ներառելով արաբական բժշկագիտության ձեռքբերումները՝ բժշկության վերոնշյալ բնագավառներում ունեցավ իր սեփական ներդրումը: Անշուշտ, Ամիրդովլաթը քաջաբեղյակ էր մինչև ԺԵ. դար միջնադարյան Հայաստանում առողջապահության կազմակերպմանն ուղղված բազմաբնույթ ձեռնարկումներին: Այդ իսկ պարճառով, թեկուզ հենց այս բնագավառում Ամիրդովլաթի ծառայությունները գնահատելու միտումով, հարկ է անդրադառնալ վաղմիջնադարյան և միջնադարյան Հայաստանում ձեռավորված առողջապահական և սանիտարահիգիենիկ ավանդույթներին:

Հայրենի է, որ դեռ Բ. ա. Բ. դարում, ըստ Մովսես Խորենացու վկայության¹², հայոց Վաղարշակ թագավորի կարգադրությամբ Հայաստանի ճահճոք վայրերը վերածել են այգիների: Բժշկապարմաբան ակադ. Լ. Նովհաննիսյանի իրավացի ենթադրմամբ՝ այդ ձեռնարկումն ուղղված է եղել այդ ժամանակ Հայաստանում խիստ փարածված մալարիա հիվանդության դեմ պայքարին¹³: Մի այլ պարմական իրողություն, առողջապահական գործը Հայաստանում առավել արդյունավետ դարձնելու նկատառումով Արարշես Բ. թագավորի (Բ. ա. Ա. դար)

11 Ֆրակաստորոյին միաժամանակ հաջողվեց փայ մի շարք վարակական հիվանդությունների ճշգրիտ մահճաբուժական նկարագիրը: Նա ապացուցեց ժանրախտի (febris pestica) երկակի հիվանդագին բնույթը՝ ժանրախտ և բժավոր փիֆ, բացահայտեց բորոտության (lepra arborum) և փղխախտ (lepra graecorum) փարբերությունը և վերջապես՝ ապացուցեց սիֆիլիսի առանձին հիվանդագին միավոր և ո՛չ բորոտության ձեռավորված փարբերակ լինելը: Անշուշտ, Ջ. Ֆրակաստորոյի՝ վարակական հիվանդությունների բնույթի և փոխանցման ուղիների վերաբերյալ փեսությունը նպատեց համաճարակագիտության հերազազարգացմանը (տես **Մ. Մյւլտանովսկի**, История медицины, М. 1961, էջ 132-134):

12 Այդ մասին Մովսես Խորենացին վկայում է. «Եւ այսպես գործելով [Վաղարշակ] կարգավորում է Մաժայրի կողմերը... անբառախիտ, խոնավ, մառախլապատ լոռավեր տեղերը. գեղեցիկ կերպով կարգավորում է այս երկիրը [Տայք]... այնտեղ ամառանոցներ պարբասրելով: Երկու անբառախիտ փափարակներն իրենց լեռներով հանդերձ... Կողի ջերմությունը մեղմացնում է այգիներով և բուրաստաններով» (**Մովսես Խորենացի**, Պարմություն Հայոց, թարգմ. ակադ. Սր. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 133-134):

13 Տես **Մ. Օգանեսյան**, История медицины в Армении, ч. I, Ереван, 1946, էջ 75:

հրամանով Արարամեա քաղաքի շուրջ փակում են այգիներ, որպեսզի աճեցնում են դեղաբույսեր. «Արարաշես կառուցեց շենքեր, ամրոցի [Արարամեա] շուրջ, կար ծառաշար բազմապիսի ծաղիկների անուշաբույրով լցված ծաղկավեր բուրաս-
պան, որը ոչ միայն ախորժեղի է աչքին եւ հոտաբերիչին, այլև դեղեր ստեղծելու համար՝ համաձայն Էսկուլապի բժշկական հնարիմաց վարդապետության»¹⁴:

Հայ պարմիչների (Մովսես Խորենացի, Մերետ, Ղազար Փարպեցի) վկայություններով Հայաստանի փարբեր շրջանների (Էրզրում, Ճաղկուրն, Նոր Բայազետ, Նորավանք՝ որպեսզի հանքային ջուրը բխում էր ս. Փոկասի եկեղեցու գոհասեղանի փակից) հանքային փաթ աղբյուրների բուժիչ ջրերի փեղանքը դարձել էր ոչ միայն ուխտափրկի, այլև՝ բուժման վայրեր բոլորությամբ փառա-
պող հիվանդների համար¹⁵:

Առողջապահության կազմակերպման գործառնությունները Հայաստանում հնուց ի վեր եղել են Հայոց աշխարհի իշխանավոր այրերի ուշադրության առար-
կան: Մասնավորապես 260 թ. Սուրեն Սալահունի իշխանի կնոջ՝ իշխանուհի Աղվիթայի հոգածությամբ Արբենուր կոչվող հանքային բուժիչ ջրերի փեղան-
քում հիմնվում է 35 մահճակալանոց հիվանդանոց, հարկապես՝ բոլորով եւ ուրու-
կով հիվանդների համար¹⁶:

Հայաստանում քրիստոնեության փարածումից հետո, դեռ վաղ միջնադա-
րում առողջապահության կազմակերպման գործում իր որոշակի ներդրումն ու-
ներ նաեւ Հայ Եկեղեցին, որի՝ այդ ուղղությամբ ձեռնարկումներն աներկբայորեն
առնչվում են Ներսես Մեծ Վեհափառի անվան ու նրա ազգանվեր գործունեությ-
ան հետ: Նրա հոգածությամբ Հայոց աշխարհի փարբեր կողմերում բացվում են
ապաստարաններ՝ հաշմանդամ եւ անօթեւան մարդկանց եւ հիվանդանոցներ՝
բոլորների եւ ուրուկների բուժման համար¹⁷:

Ուշագրավ են հիշյալ ժամանակաշրջանի՝ առողջապահական նշանակույթ-
յան ձեռնարկումների մասին դեռ Դ. դարում Փոքր Հայքի հայաբնակ Մերաս-
պիա եւ Կեսարիա քաղաքներում բացված հիվանդանոցների վերաբերյալ պար-

14 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պարմություն Արծրունյաց փան, թարգմ.՝ Վ. Վարդանյանի, Երևան, 1978, էջ 74:

15 Տե՛ս **Л. Оганесян**, էջ 143-145:

16 Տե՛ս **Դ. Ալիշան**, Հայապարում, Պարմիչք եւ Պարմիթինք Հայոց, մասն Բ., Վենետիկ, 1901, էջ 85-87:

17 Այս բարեգործական հիմնարկները բացվեցին Աշոիշարի առաջին եկեղեցական ժողովի (365թ.) որոշմամբ, որն անցավ Ներսես Մեծ եպիսկոպոսապետի ղեկավարությամբ՝ եկեղեցականների եւ աշխարհականների մասնակցությամբ: Ժողովի կանոնները ամփոփվեցին վեց հրահանգով (**Ն. Մեղիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա., Ծուշի, 1903, էջ 316): Շահապիվանում գումարված երկրորդ կանոնադիր ժողովը (447 թ.) ավելացրեց նոր կանոններ, մասնավորապես՝ խստիվ արգելվում էր արյունակցական ամուսնությունները մինչև չորրորդ աստիճան. «Ոչ ոք չհամարձակվի ամուսնանալ քեռորդու, եղբորորդու կամ հորաբորջ, կամ ազգականի հետ մինչև չորրորդ ծնունդը» (անդ, էջ 334): Խիստ կանոններ էին գործում անբարոյության եւ ամուսնական դավաճանության դեմ, ընդ որում պարբեր էր սահմանված բոլորի նկարմամբ՝ անկախ դասային պարկանելությունից: Այս որոշումները, անփարակույս, հեղափոխում էին առողջապահական, հիգիենիկ եւ կանխարգելիչ նպատակներ՝ սահմանափակել ժառանգական եւ վարակիչ բնույթի հիվանդությունների փարածումը:

մական վկայությունները: «Բագիլիաս» անունով հայրնի այդ հիմնարկները, փաստորեն, ամբողջ հիվանդանոցային թաղամասեր էին՝ վարակիչ, վիրաբուժական և քրեական մահճակալային բուժմամբ հիվանդների համար մի շարք առանձնաշենքերով և մեկուսարաններով, հոսպիտալ առանձին մասնաշենքերով: Ի փարբերություն զինվորական հոսպիտալների (վալեպուդինարիա՝ այս հիվանդանոցները նախադրված էին քաղաքացիական բնակչության համար¹⁸:

Առողջապահական հիմնարկների և այդ նպատակին ծառայող բարեգործական ձեռնարկումների նոր իրողությունների ենթ առնչվում Բագրապունիների հզոր և անկախ հայկական թագավորության գրեթե երկհարյուրամյա (Ժ.-ԺԱ. դարեր) իշխանության շրջանում: Դրա ապացույցն էին թագավորության փառքեր քաղաքներում գործող առողջապահական հիմնարկներն ու սանիտարահիգիենիկ կառույցները՝ հասարակական շենքերը, բաղնիքները, ջրափար խողովակները և այլն¹⁹:

Բագրապունյաց թագավորության կործանումից հետո, ինչպես հայրնի է, մշակութային կյանքը Նայաստանից քաղաքացիական պատերազմից հիվանդանոցային անկախ թագավորություն, ուր սերտ առնչումներ կային հարևան արևմտաեվրոպական երկրների հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Նայրնի է Կիլիկիայի Լեոն Բ. թագավորի, նրա դուստր Զապել թագուհու, վերջինիս դուստր Ֆիմիի և Լեոն Բ.-ի թոռ Լեոն Գ.-ի բարեգործական գործունեությունը, որոնց ջանքերով բացվում են նոր հիվանդանոցներ և բուժարաններ²⁰: Ի մասնավորի՝ Զապել թագուհու հոգածությամբ Սիս մայրաքաղաքում 1241 թ. կառուցվում է մի հիվանդանոց, որն ուներ հիվանդների բուժման և սպասարկման կապարյալ պայմաններ²¹:

Արդեն ԺԴ. դարում, Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, հայ ժողովուրդը, գրկված լինելով պարսկական ինքնուրույնությունից, սպիակված էր ազգային մշակույթը պահպանել և զարգացնել Նայաստանից դուրս՝ հայկական գաղթօջախներում: Դրանցից մեկն էր պարսկական Փոքր Նայքի մայրաքաղաք Ամասիան, որը ԺԵ. դարի կեսից՝ Բյուզանդական կայսրության փլուզումից հետո, դարձել էր Օսմանյան Թուրքիայի խոշոր վիլայեթներից մեկի կենտրոնը: Նենց այսպիսի էր սերում միջնադարյան հայ բժշկության երախտավոր Ամիրդովլաթ Ամասիացին:

Ամիրդովլաթ բժշկապետի՝ բժշկության գրեթե բոլոր բնագավառներն

18 Տե՛ս Թ. Մեյեր Շտեյներ, Կ. Յուգոֆ, էջ 19:

19 Տե՛ս Դ. Մարր, Раскопки в Ани в 1904 году, С. Петербург, 1906, էջ 14. Դ. Ալիշան, Շիրակ, Տեղագրություն պարսկերազոյց, Վենետիկ, 1881, էջ 81:

20 Տե՛ս Դ. Ալիշան, Սիսուան, Նամագրություն Նայկական Կիլիկիոյ և Լեոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 223, 514-515:

21 «Զապել թագուհին շինեաց ի Սիս հիւանդանոց մի, և ի մէջն Բրգայ (աւագան) և հայի յարեմարեան դուռն ի Սուր բերդն, զոր այժմ Մարսիան կոչի... Եւ այս օրինակ զիր գրաւ ի վերայ դրանն, թէ Կապարեցաւ յարմարումն հիւանդանոցին հրամանաւ մեծաւ փառաւր-Քրիստոսատէր թագուհոյն Զապելի, ի թուականութեանն Նայոց ՈՂ. (1241) ամին» (անդ, էջ 539):

ընդգրկող երկերում առանձին ուսումնասիրության նյութ են խնդրո առարկա՝ առողջապահության և հիգիենայի ոլորտներին վերաբերող մեկնաբանումները, որոնք լավագույնս արտացոլված են «Ուսումնական բժշկությանն է այս» գործի մեջ: Հիմք ունենալով մինչև ԺԵ. դարի բժշկության մեջ առկա առողջության պահպանման հանձնարարականները՝ Ամիրդովլաթը ևս կարևորում է օրգանիզմում օրգան-համակարգերի կենսաբանական գործառույթների հավասարակշռված վիճակը և կապը արտաքին միջավայրի հետ: Առողջության պահպանման գործում շեշտադրելով աշխարհային բնության, ֆիզիկական կոփվածության և ժառանգական գործոնի կարևորությունը՝ նա համակարգված ներկայացնում է դրանցից յուրաքանչյուրի, իր իսկ ձևակերպմամբ՝ «անձը ուժով և զորաւոր պահելուն» միավոր առողջապահական նշանակությունը:

Առաջնահերթ համարելով հիվանդությունների կանխարգելման կարևորագույն գործոնը՝ Ամիրդովլաթը նշում է այն իրականացնելու որոշակի միջոցները. ապրելակերպի ճիշտ ռեժիմ ու սննդակարգ, ֆիզիկական չափավոր ծանրաբեռնվածություն՝ կապված փարվա եղանակների և օրգանիզմի անհարկական առանձնահատկությունների հետ և այլն: Բանի որ քննարկվող ժամանակաշրջանում հիվանդության պարճառագիտության բնույթը դեռ մնում էր ջրացահայրված, հիվանդությունների կանխարգելման գործընթացն իրականացվում էր հիմնականում սննդակարգի և սանիտարահիգիենիկ միջոցառումների կատարելագործման ճանապարհով: Ներկայումս Հիպոկրատին ամասիացի բժշկապետը նույնպես զգուշացնում է գերծ մնալ օրգանիզմի համար վրանգավոր կարող փոփոխություններից, խորհուրդ է փալիս մի սովորույթից մյուսին անցնել աստիճանաբար, քանի որ յուրաքանչյուր ծայրահեղություն մարդու բնության թշնամին է (չափից շատ նիհարելն ու գիրանալը, թերսնումն ու շարակերությունը, ավելի քան անհրաժեշտ՝ քունը և անքնությունը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը և այլն): Ներաբրբիր և, ինչու չէ, այսօրվա համար այժմեական են հնչում սննդակարգի մասին Ամիրդովլաթի դատողությունները. «Գիտացիր, որ առողջ յայն ժամն պահէ, որ գկերակուրն ուրէ՛ նայ անձն թեթև լինի և որ գկերակուրն ուրէ՛ նայ հալէ և մարսէ և զշարժումն գոր պէտքն է՝ զայն այնէ: Եւ յայն ժամ ուրէ՛ գկերակուրն, որ սիրտն ուզէ և քաղցած լինի և մարսէ և գոսկերքն ուժով և զաւրաւոր այնէ և ուժ քայ անձին: ...Եւ թէ շատ ուրէս գկերակուրն շուր չի հալի և զանձն ծանդրացնէ և պարէի է, որոյ որ ուզէ, որ կերակուր ուրէ՛ յառաջ քան գուրելն կու պիտի, որ ճուլապ կամ սքանճուպին ումպէ և ապայ կերակուր ուրէ, որ սրամոքն գկերակուրն շուր հալէ: Եւ հանց ուրել կու պիտի գկերակուրն, որ դեռ փորն չէ կշտացնել, նայ գձեռքն ի յեւր քաշէ, զի յառողջութիւն ի քիչ ուրելն է, քանի որ քիչ ուրէս առողջութեան նշան է: Եւ այնոք, որ գիրենց բնութիւնն ուսոցելին, որ ի ժիր շատ ուրեն, այն չէ աղէկ սովորութիւն,

վասն այն ասցել են բժշկապետքն, թէ յերոյ ազգի ազգի հիւանդութիւն բերէ»²²: Ըստ այդմ՝ սննդակարգն ընտրելիս պետք է նկատի ունենալ մարդու փարիքը (երիտասարդները կարիք ունեն ավելի հագեցած սննդի, քան ծերերը), փարվա եղանակը (ձմռանը սննդակարգի մեջ պետք է ավելացնել հացը և մսեղենը, պակասեցնել բանջարեղենը, ամռանը հսկառակը՝ պակասեցնել մսափառակները և ավելացնել բանջարեղենն ու մրգերը): Պետք է խստորեն հետեւել օրգանիզմից արտաթորանքների ժամանակին արտազատմանը, անհրաժեշտության պարագայում օգտագործել մաքրող հոգնաներ և թուլացնող միջոցներ, ամսվա մեջ 1-2 անգամ ընդունել արհեստական փսխում առաջացնող միջոցներ. «...Պարեմ այն է, որ ամիսն Բ. (2) փարպայ պիտի որ փսխեն, որ սրամոքն յիսրկի և կերակուրն հալի և զանձն գիրացնէ և ազարէ պալղամոք մարդուն և նկրիսին և ոսկրաց ցաւուն և կոնակին շար գաւրութիւն ունի: Եւ ազարէ գլխուն և ըղեղանն և փանի գպեղծ գիճութիւնն և զաչքն պայծառ առնէ: ...Եւ փսխելուն դեղերն այլ յիշենք զանվնասն. սքանճուպին և բողկի ջուր և սամթի ջուր և դեղին քունկար և որ ի սոցանէ ի գար է՝ վնասակար է և սպանող. որպէս սեւ վրացի կոճն և սպիտակն և ճապալիանկն և որ սոցին նման է»²³:

Ըստ Ամիրդովլաթ Ամասիացոյ՝ սնունդը ոչ միայն սնվելու միջոց է, այլ նաև բուժամիջոց, որն ունակ է ազդելու օրգանիզմի փարբեր գործառնությունների վրա: Ամիրդովլաթն առողջ մարդու սննդակարգի անհրաժեշտ բաղադրամասեր է համարում զարեայութից պարբերաբար շիւաները, մեղրը, բուսական յուղերը, պանիրը, բանջարեղենն ու մրգերը: Մսափառակներից խորհուրդ է տալիս թռչնի և նապաստակի միս, փարբեր ձկնափառակներ: Ամիրդովլաթը, առողջապահական նկատառումներով կողմնակից լինելով սննդի չափավոր ընդունմանը, խորհուրդ է տալիս կերակրափառակներն ընդունել որոշակի հաջորդականությամբ, նախապես ընդունել հեղուկ, արագ մարսվող սննդափառակ, այնուհետև՝ կոշտ, դժվարամարս կերակուր: Անհրաժեշտ է ուրել դանդաղ, լավ ծամելով, չսնվել ֆիզիկական աշխատանքից և լոգանքից անմիջապես հետո: Նեղուկներից պարբերաբար է համարում ջուրը, ինչպես նաև՝ չափավոր քանակությամբ գինին: Վկայակոչելով Գալենին և Ռագեսին՝ հայ բժշկապետը նշում է գինու չափավոր օգտագործման դրական կողմերը. այն նպաստում է մարսողությանը, խթանում է օրգանիզմի կենսական գործընթացները, իսկ չափից ավելի խմելը վնասում է մարդու առողջությանը, և պարճառ դառնում փարբեր հիվանդությունների՝ կաթված, անդամալուծություն, հանկարծամահություն, գլխացավ, նույնիսկ՝ հոգեկան խանգարումներ. «...գինի խմելն հանց կու պիտի, որ ի ամիսն Ա. փարպայ կամ Բ. փարպայ խմէ, ...եփ գինին չափաւոր խմէ գաւրութիւնն այնէ, որ յառաջն զանձն փաքցնէ... և բնական փաքութեանն ուժ փայ և գաւրացնէ և գերեսն գունն պայծառ առնէ և գարուն յիսրկէ... Եւ այս ամենայն այնժամ լինի, որ

22 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 21բ:

23 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 26ա, 27ա:

գինքն չափառոր խմէ և գինքն չի փայ ի գինի: Եւ թէ շար խմէ և հարքենայ... զեն առնէ և զանձն վարածցնէ և գիտեմքն փանի և գէշ հիւանդութիւն ածէ... որպէս սքթայ և ֆալիլ և ոսկրաց վարածութիւն և սարյ և լակովայ և թաշանուճ... և որ սոցին նման է»²⁴:

Ուշագրավ են Ամիրդովլաթի ցուցումները կապված խմելու ջրի որակի և օգտագործման հետ. հակացուցված է ջուր խմել լոգանքից անմիջապես հետո, քաղցած վիճակում, խիստ ծարավի զգացողության դեպքում խորհուրդ է տրվում ջուրը խմել ոչ միանգամից, այլ՝ կում-կում: Կարևորվում է ջրի որակը, որն էական նշանակություն ունի նյութափոխանակության և մարսողության բնականոն կենսաբանական գործառույթների համար:

Չափազանց այժմեական են արդի բժշկագիտական հանձնարարականներին արձագանքող՝ սննդակարգի (դիետա) մասին Ամիրդովլաթի նկարագրումները, քանզի այսօր գիտականորեն հիմնավորված է ճիշտ ընտրված սննդակարգի և սնվելու ռեժիմի որոշիչ դերը նյութափոխանակության գործընթացում: Նիմք ընդունելով սննդաբանական որակական հատկանիշները, նրա մարավելու և արյան մեջ ներծծվելու աստիճանը՝ Ամիրդովլաթը խորհուրդ է տալիս հետեւել սննդի օրաբաժնի (ռացիոնի) բազմազանությանն ու համամասնությանը, որն ինքնին կարող է ունենալ նաեւ բուժիչ նշանակություն: Պարտադիր է, որ մի շարք հիվանդությունների (աղեստամոքսային ուղիների ախտահարում, մարսողության խանգարում, որոշ փնեղային հիվանդություններ, թոքային փութերկույտ լուրջ և այլն) բուժման համար Ամիրդովլաթը խորհուրդ է տալիս սննդաբուժում, որն ավելի արդյունավետ կարող է լինել, քան դեղորայքային բուժումը: Շարադրածից ակնհայտ է հայ բժշկապետի հարցադրումների թե՛ գիտական և թե՛ գործնական արդիականությունը, որն այսօր ևս պետք է հետաքրքրի բժիշկ դիետոլոգներին և հիգիենիստներին:

Ըստ Ամիրդովլաթի՝ առողջության պահպանման գործում պակաս կարևոր չէ աշխատանքի ռեժիմի և ֆիզիկական ծանրաբեռնվածության ճիշտ կազմակերպումը. խորհուրդ չի տրվում երկար ժամանակ մնալ նույն անշարժ դիրքում, որը նպաստում է մարմնի բնական ներքին ջերմության նվազեցմանը, դրան հակառակ՝ գործուն աշխատանքը խթանում է օրգանների, մասնավորապես՝ աղեստամոքսային ուղիների կենսաբանական գործառույթները. «...Եւ աշխատիլն ի կերակրէն յառաջ զբնական փաքութիւն յաւելցնէ և զկերակուրն հալէ և զանդամքն զարացնէ, և թէ ի կերակրէն հետեւ աշխատիլն զանձն վարած առնէ և յավաղ առնէ և պեղծ հիւրնդութիւն բերէ, բայց թէ այն ժամանակն չի այնել և կերակրէն յետեւ քիչ աշխատիլն աղէկ է և զկերակուրն հալէ: ...Եւ ի կերակրէն յառաջ աշխատիլն լերդին և սրամոքին ուժ փայ և ով որ կուզէ որ զկերակուրն հալէ և առողջութիւն բերէ՝ չէ աղէկ, որ ի կերակրէն յետեւ շար աշխատիլն

²⁴ ՄՄ, ձեռ. հ^թ 8871, էջ 23ա:

չէ աղէկ: Եւ առողջութեան նշանն է եւ կենդանութեան, որ ի կերակրէն յառաջ աշխարհի, ի հիւրնությունէն ի գար պահէ»²⁵:

Քննելու ռեժիմը նույնպէս կարևորը Կրտսէն է զբաղեցնում ամիրդովլաթյան առողջապահական ցուցումների մեջ, ընդ որում դրան պէտք է հետեւեն ոչ միայն հիվանդները, այլ նաեւ՝ առողջները: Լավագոյնն է համարվում չափավոր, չընդհարվող քունը, որը հանգստացնում է նյարդային համակարգը եւ կանոնավորում օրգանիզմի կենսաբանական գործընթացները. «...քուն լինալն հանց պիտի, որ մարդուն անձն հանգիստ լինի եւ աւգնածութիւնն երթայ եւ կերակուրն հալի: Եւ հանց որ այսպէս որ ասացի, որ լինի նայ, ինքն զանձն առողջ պահէ եւ զուժն յաւելցնէ եւ ըստամոքացն բոցն յաւգոյրն եւ ի պիտեւան առնէ»²⁶:

Ուշագրավ են առողջության պահպանման գործում նյարդային համակարգի որոշիչ դերի մասին Ամիրդովլաթի ցուցումները. պէտք է զգուշանալ արտահայտված զգացմունքային գործոններից (բարկություն, վախ, մարմնավոր ցանկությունների չարաշահում), որոնք կարող են «բար» հիվանդությունների պատճառ դառնալ:

Զարմանալի կերպով սեքսուալությունից ներկայիս ըմբռնումներին նույնահունչ, հարիր դիտարկումներ կան բժշկարանի «Վասն թըպրի ամուսնութեան» գլխում: Ահալասիկ, Ամիրդովլաթի դատողությունները ամուսնության եւ «մերձավորության» խնդիրների վերաբերյալ. «Եւ շահն այն է ամուսնութեան, որ զանձն թեթեւ այնէ եւ զսիրտն խնդացնէ եւ զճիկն ի սրտէն հանէ եւ զհոգսն փանի եւ զագգի ազգի մաղձանքն փանի եւ զմալայխալիայն եւ զսավրայի հիւրնությունն փանի եւ որոյ գլուխն եւ աչքն ծանդրանայ, ազգը զիրիկամն եւ զաճուկն եւ ի պէտք խառնումնոց սրբէ... եւ յորժամ զինք [մերձավորութիւն] շար այնէն՝ զէն այնէ եւ զայն շահերն, որ ի վերն յիշեցի՝ նայ ի գէն դառնայ եւ զանդամոցն ուժն փանի եւ զաչից լուս պակսեցնէ, եւ զմարդն շուր ծերացնէ, եւ զանձն ավաղեցնէ, եւ զզղերն վարածցնէ: Եւ թէ ավաղ մարդն շար մերձավորութիւն առնէ, նա հալւնաջ ջերմ ածէ»²⁷:

Իրենց նուրբ դիտողականությամբ եւ բժշկական փորձական աշխարանքից բխող ճիշդ մեկնաբանումներով ավելի քան կիրառելի են Ամիրդովլաթի խորհուրդները նորածնի խնամքի, հիգիենայի, դաստիարակության, ինչպէս նաեւ՝ կրթով կերակրող մայրերի սննդի ռեժիմի վերաբերյալ: Բժշկարանի «Վասն թըպրի սննդեան փոխոյց, որ առողջ սնցնէն» վերաբառությամբ գլխում Ամիրդովլաթը շեշտադրում է նորածիններին կրծքի կաթով կերակրելու անհրաժեշտությունը՝ չնոռանալով կարևորել սպինայի ֆիզիկական եւ հոգեկան առողջ կենսակերպը: Նա սպինայի լավագոյն փորձը է համարում 25-ից 35-ը, քանի որ այն երիտասարդության եւ ուժերի ծաղկման լավագոյն շրջանն է: Սպինային

25 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 21ա:

26 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 23բ:

27 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 24բ:

պելքը է գերծ լինի հոգեկան եւ նյարդային ցնցումներից (բացառել վախի, տագնապի, տխրության զգացողությունը), քանզի նորածնի մոր հոգեկան աշխարհի անդորրը եւ հոգեկան դրական հույզերը ուղղակիորեն փոխանցվում են մանկանը՝ պայմանավորելով նրա ֆիզիկական եւ հոգեկան աշխարհի առողջ կենսակերպը. «Եւ դայեկն կու պիտի, որ դայեկութիւնն աղվոր վարպետ լինի եւ աղէկ գիտենայ զարդին զպէսն զկապելն եւ զաճեւն աղէկ գիտենայ, որ զի երեխային անձն որպէս մոմ է եւ մարն կու պիտի, որ զնորայ կաթն քիչ քիչ տայ եւ կամաց արեւ, եւ աղէկ խոսքվի գրուցէ ու չի կանչէ ի տղին յերեսն: ...Կու պիտի որ տղին ծրծնողն աղէկ կերակուր ուրէ, որպէս հաւու միս եւ գառան միս եւ գէր հաւ ձագ եւ ուլի միս եւ շաւրվայնի: Եւ թէ կաթին համն աղի լինի՝ նայ կու պիտի, որ զխիւրին հնդին զջուրն եւ զխաշխաշն եփէ եւ ճուլապով խմէ՝ խիստ օգտէ: Եւ թէ կաթն անհամ լինի, նայ կու պիտի որ քաղցր եւ գէր կերակուր ուրէ եւ ապրաֆիլ փոքր եւ հալիլայ սնուցած ուրէ՝ շաւր օգտէ: ...Եւ յորժամ տղան մեծնայ, նայ քիչ քիչ զկաթն քիչ տան եւ յորժամ ակռան ելանէ, քիչ քիչ հաց տան, որ ուրէ՝ խիստ օգտէ եւ ուսոցանէն զկերակուրն ուրելն եւ շուրվայ տան, որ խմէ եւ քիչ քիչ ի կաթէն կտրէն զտղան ի ծրծէն: Եւ զտղան ի ձմռան մէջն եւ ամռան մէջն չէ պատիհ, որ ի կաթէն կտրէն՝ աշնան ամիսն լաւ է եւ կամ գարնան ժամանակն լաւ է»²⁸:

Ներելելով հիպոկրատյան դրոյթներին՝ Ամիրդովլաթը կարեւորում է տարվա չորս եղանակների ազդեցությունը օրգանիզմի վրա: Նայ բժշկապետի դատողություններն այս բնագավառում արձագանքում են անսրիկ բժշկության դասականների կարծիքներին²⁹:

Ամիրդովլաթը նույնպես այն տեսակետին է, որ բնակլիմայական պայմանները՝ սառն ու տաք քամիները, եւ որ կարեւոր է բնակավայրի դիրքը որոշիչ ազդեցություն են ունենում մարդու առողջության վրա: Այսպէս՝ հյուսիսային սառը եւ չոր քամիները նպաստում են ֆիզիկական կոփվածությանը եւ կենսաբանական

28 ՄՄ, ձեռ. հ^թ 8871, էջ 30ա-31բ:

29 Տարվա չորս եղանակների, ինչպէս նաեւ աշխարհագրական վայրի որոշիչ դերը օրգանիզմի թե՛ բնականոն եւ թե՛ անբնական գործառնությունների վրա հանգամանորեն շարադրված են «Նիպոկրատյան հավաքածու»-ի «De natura hominis» (Մարդու բնության մասին), «De aere, aquis, locis» (Օդի, ջրի, տեղանքի մասին), «De flatibus» (Գազների մասին) հատորներում: Նիպոկրատը կարեւորում է երկնային լուսավորության ծագման եւ մայր մրելու փուլերը, քամիների տեսակը, ջրի որակը, լեռնային թե՛ հովիտային տեղանքը. «Ով ուզում է հաջողություն ունենալ բժշկական արվեստում, պելքը է հիմք ընդունի հետեւյալ կանոնները՝ առաջին հերթին հաշվի առնի տարվա եղանակը, քամիների տեսակն ու ուղղությունը, խմելու ջրի որակը» (Гиппократ, Избранные книги, «De aere, aquis, locis», пер. с греческого В. Руднева, М., 1994, էջ 278. «Книга античности и Возрождения о временах года и здоровье», М., 1972, էջ 12, 32-35): Նիպոկրատը բնութագրում է մարդկանց խառնվածքային տիպերը ըստ բնակավայրի եւ կենցաղավարության: Ուշագրավ է հնագույն ժողովուրդներից մեկի՝ սկյութների հիպոկրատյան բնութագրումը. «Այս ժողովուրդը հիմնականում վարում է քցվոր կյանք, ապրում է տայերի վրա, նրանց վարած կենցաղը պարզապէս դառնում մի շարք հիվանդությունների՝ հոդապապ (podagra), նարանեղի բորբոքում (ishias), անպարզաբնություն (տղամարդկանց մոտ պարզապէս շարունակ ձիավարությունն է, իսկ կանանց մոտ ոչ գործուն կենցաղային կյանքը, որը հանգեցնում է սեռական օրգանների ճարպակալման եւ ֆիզիոլոգիական գործառնությունների խախտման): Սա է պարզապէս, որ տղամարդկանց մեծ մասը դառնում է ներքին» (De aere, aquis, locis, стр. 289-300): Ի դեպ, այսօր այս խնդիրներով զբաղվող գիտությունը կոչվում է antropogeografia:

բնականոն գործառնություններին: Այսուհանդերձ այս վայրերում գերակշռում են սուր հիվանդությունները. «Եւ այլ յիշեմք զհիւսիսային կողմն, որ ի դէմն է հարաւոյ, եւ իւր բնութիւն հով է եւ չոր է այն պարճառովն, որ արեգակն ի յայն կողմանէն հեռու է ի գեպնէն, եւ ավճին մօտիկ է, եւ բնութիւն հով է եւ զանձն հովացնէ, եւ զկերակուրն մարսէ, եւ ժիր զանձն առողջ պահէ, որ զոգն որդորէ եւ բնական քաթութեան ուժ քա, զառողջութիւն առողջ պահէ, եւ վնաս առնէ թոքին, զուքամ եւ նուզլա առնէ»³⁰: Նարավային քաթ եւ խոնավ քամիներն առաջացնում են ֆիզիկական ուժի անկում եւ մկանային թուլություն, դրանով հանդերձ այդ վայրերում սուր հիվանդությունները հազվադեպ են, գերակշռում են խրոնիկական ախտաբարոմները. «...եւ մարդ ի քաթ քաղքնին վարած է թուլանձն լինի, եւ ուժն վարածի, եւ զօրութիւն զբնութիւն աւիրէ, եւ ան քաղաքն, որ ի ծովու մօտ լինի, եւ կամ ի բոլորն ջուր լինի, նորա բնութիւն գիճային է... եւ այն քաղաքն, որ ի բնութիւնն քաթ է, զմարդուն գերեսն դեղնեցնէ եւ զոսկերքն վարածցնէ»³¹:

Տարբեր է նաեւ արեւելքի եւ արեւմուտքի բնակչւնայական գործոնների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա. «Այլ յիշեմք զարեւելքն, որ աղօթկողմ է քրիստոնէից, եւ իւր բնութիւն մուսկապիլ է, եւ քամին որ ի այս դիհէս զա՝ այնոր սապա ասեն, եւ բնութիւն ի հովութիւն եւ ի քաթութիւն ի մէջ է: Եւ արեւմուտքն ի արեւելից դէմն է, եւ նորա միզաճն այլ մուսկապիլ է, եւ քամին ի այն կողմանէ զա՝ քապուր ասեն, եւ այս Բ. քամին այլ անձին պիտեան է»³²:

Ամիրդովլաթը, հետեւելով միջնադարում գերիշխող հիպոկրատյան հեղափոխության ուսմունքին³³, այդ կողմնորոշմամբ փայլա է նաեւ առողջապահական որոշակի մեկնաբանումներ եւ ցուցումներ: Ամիրդովլաթի բնորոշմամբ՝ քաթվա չորս եղանակները որոշիչ ազդեցություն են ունենում օրգանիզմի չորս հիմնական հեղափոխության (արյուն, լորձ, սև մաղձ եւ դեղին մաղձ) քանակական եւ որակական փոփոխությունների վրա՝ դրանով իսկ բացատրելով քաթերի հիվանդությունների շարք կամ քիչ քարաձվածությունը: Այս հարցադրումներին հանգամանալից անդրադարձ կա «Ուսումն բժշկութեանն է այս» գործի «Վասն զայս պեղծ

30 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 32բ:

31 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 413, էջ 42բ-43ա:

32 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 32բ:

33 Արեւելյան բժշկության մեջ ծնունդ առած եւ հունական բնափիլիսոփայության մեջ քրեոսյան վերածված 4 քաթերի (կրակ, հող, օդ, ջուր) ուսմունքը դարձավ հիպոկրատյան հեղափոխության ախտաբանության քրեոսյան հիմքը: Բժշկագիտության մեջ քանակի ու չորս հարաբերւած այս քրեոսյանը շարք ավելի համոզիչ եւ ընդգրկուն է ձեռնարկված հիպոկրատյան «De prisca medicina» (Նին բժշկության մասին) «De morbo sacro» (Սքրագան հիվանդության մասին) եւ «De aere, aquis, locis» (Օդի, ջրի, քրեոսի մասին) գործերում, որ հեղինակը հետեւողականորեն զարգացնում է այս դրույթը, որ օրգանիզմում ընթացող թե՛ բնականոն եւ թե՛ ախտաբանական գործառնությունները պայմանավորվում են չորս հեղափոխության որակական եւ քանակական փոփոխություններով: Ավելին՝ դրանցից որեւէ մեկի գերակշռությամբ են բնութագրվում մարդկանց խառնվածքային չորս տիպերը՝ սանգվինիկ, երբ գերակշռում է արյունը (sanguis), ֆլեգմատիկ, երբ գերակշռում է լորձը (phlegma), խալերիկ, երբ գերակշռում է դեղին մաղձը (bilis) եւ մելանխոլիկ, երբ գերակշռում է սև մաղձը (bilis): Ըստ Նիպոկրատի՝ քաթվա եղանակները, ցուրտը, քաթը, չորությունն ու խոնավությունը անմիջական ազդեցություն ունեն հեղափոխության քանակական եւ որակական փոփոխությունների վրա («De natura hominis»՝ Մարդու բնության մասին), էջ 201-203:

խառնվածոցն ընծայի կամ յարենէ կամ սափրայէ կամ պալղամէ կամ սավրայէ լինի» գլխում: Ամիրդովլաթի բնորոշմամբ՝ ձմռանը օրգանիզմում գերակշռում է դեղին լեղին (պալղամ), գարնանը՝ արյունը, ամռանը՝ լորձը (սափրայ) և աշնանը՝ սև լեղին (սավրայ): Եւ քանզի, ըստ միջնադարյան ավանդական բժշկագիտության, օրգանիզմում հեղահյութերի քանակական հաշվեկշռի խախտումը առիթ է դառնում որոշակի հիվանդությունների, ըստ այդմ՝ ձմռանը («պալղամի» ավելցուկի պարճառով) հաճախ են հանդիպում անդամալուծություն (Paralysis), մոռացկոտություն (Sclerosis), ընկևալորություն (Epilepsia), արյունազեղում (Apoplexiae cerebri), գարնանը՝ («արյան» ավելցուկի պարճառով) փնեղային հիվանդություններ՝ մասնավորապես կայուն փնեղ (Febris haectica) և փնեղ (Febris continua), արյունահոսություններ, ամռանը՝ («սափրայի» ավելցուկի պարճառով) գլխացավություն, թոքաբորբ (Pneumonia) թոքամիզի բորբոքում (Pleuritis), լյարդի հիվանդություններ, դեղնախտ (Icterus), աշնանը («սավրայի» ավելցուկի պարճառով) գերակշռում են փնեղային և հոգեկան հիվանդությունները՝ կայուն փնեղ (Empyema necessitatis), մելանխոլիա (Melancholia). «Գիւրացիք, որ քարին չորս եղանակ է... գարնան եղանակին բնութիւնն մուխթափիլ է, ... քարք է և զէճ՝ գարնան բնութիւնն ունի... գամռան եղանակն բնութիւնն քարք է և չոր է՝ ունի զբնութիւնն սափրայ: ...Այլ յիշենք գաշնան եղանակն... բնութիւնն հով է և չոր է, գաւալրային բնութիւնն ունի... Այլ յիշենք գծմեռնային եղանակն, գիւրացիք... հով է և զէճ է, ունի գալղա մին բնութիւնն»³⁴:

«Գիւրացիք, որ յորժամ, որ ի մարդուն անձն արուն աւելնայ... և այսպէս նշանի երեւնայ, որպէս խոջակն բռնվիլն և ուռիլն և ակռայրակերն արունիլն և մկնալամերն և կարմիր ուռեցնին... և այն ջերմն, որ մուրաղայ ասէն, և որոյ քիթն շար արունի և սինեախաւս ջերմն և գոր ի այսոց նման լինին ...Յորժամ սափրան ի մարդուն անձն յաւելնայ և ուզենայ, որ վնաս գործէ անձինն և անպարճառ հիւանդ առնէ գմարդն: Եւ կէս գլխուցատութիւնն և գլխուցատութիւնն, և բոր և կիծ, և քերվիլ, և սարսամ և պարսամ, և գաթուլճամբ և գաթուլթիայ, և խոց լերդին և աջայցատութիւնն, և եարախան... Եւ յորժամ պալղամն ի մարդուն անձն շարանայ և յաւելնայ, նայ, կու պիտի, որ ի մարդուն ի անձն հիւանդութիւնն երեւնայ, որպէս սարյ և ֆալիճ, և սաքրայ, և քապուս, և մոռցկոտութիւնն... և իրիկամացատութիւնն, և սպիտակ պիսակն և սքամոքին վարուժութիւնն... Եւ յորժամ սավրան ի մարդուն ի յանձն յաւելնայ, նայ հիւրնդութիւն բերէ, որ քուն չի լինի մարդն, և զշալշան և զխելքն կորսնցնէ և փայծղանցատութիւն... և պեղծ խոցեր, և խէվութիւն, և գողութիւն, և գայն ջերմն, որ ի չորս արն մէկ բռնէ, և գոր նոցին նման է»³⁵:

Ամիրդովլաթյան բժշկության մեջ կարևորվում են նաև սանիտարահիգիենիկ հարցադրումները՝ բնակչության հիգիենան, բնակավայրերի, հասարա-

34 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 43ա-43բ:

35 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 413, էջ 44բ, 45ա, 45բ, 46բ:

կական վայրերի մայքրությունը եւ այլն: Ընդհանուր առմամբ հիգիենայի (հուն. *hygienos* - առողջությանը նպաստող) խնդիրը, որպես առողջապահության թիվ առաջին գործոն, դեռ ամենավաղ ժամանակներից եղել է փարբեր ազգերի ամենակենսական խնդիրներից մեկը, եւ միշտ էլ թե՛ բժշկագիտական, թե՛ առօրյա կեցության փեսանկյունից առաջնային եւ համարվել արտաքին միջավայրի եւ կենցաղային պայմանների, աշխատանքային եւ հասարակական կեցության ուղղակի ազդեցությունը մարդու առողջության վրա: Բնականորեն, առողջապահական այդ կարևորագույն գործոնը չէր կարող դուրս մնալ հայ բժշկապետի առողջապահական հանձնարարականների շրջանակից: Ուսումնասիրվող բժշկարանի «Վասն թըրպիի, որ մարդ զանձն աճուել փայ», «Վասն թըրպիի ի բաղանիս լվացուելուն», «Վասն այն թըրպիինի, որ ի բաղանիս ի յանձն կիր ածել» վերաբերությամբ գլուխներում ուշագրավ հրահանգներ կան անձնական հիգիենայի՝ մարմնի մաքրության եւ լոզանքների ձեւերի մասին՝ դրանք համարելով ջրաբուժության արդյունավետ միջոցներ (հայրնի է, որ միջնադարյան բաղնիքները նաեւ յուրօրինակ ջրաբուժարաններ են եղել): Փաստորեն Ամիրդովլաթ բժշկապետը, փարբերակելով լոզանքների փարբեր ձեւերի եւ այդ ընթացքում մերսման անմիջական ազդեցությունն օրգանիզմի կենսաբանական գործառնությունների վրա, ըստ այդմ փալիս է ջրաբուժության միջոցով ոսկրաբուժության, հոդաբուժության, անոթաբուժության եւ թերապեւտիկ այլ գործնական հանձնարարականներ. «...աճովիլն զոսկրանք եւ զաղուածքն զաւրաւոր առնէ: Եւ կակող աճուեն զանձն... եւ զերկնին բանայ եւ զոսկերքն ուժովցնէ... եւ զանձն յիսրկէ, եւ զբնական փաքութիւն ուժովցնէ, եւ զփաքութիւնն յամենայն անձն բաժանէ եւ զանձին զկալուածն բանայ... եւ զերկնին եւ զջղերն ամրացնէ... Եւ ի փաք ջուրն լվացվիլն զանձն փաքցնէ եւ զգիճութիւն յաւելցնէ եւ զբնութիւն աղէկ այնէ: Եւ զգոգին, որ կալուի ի չորութենէ՝ բանայ եւ անուշ քուն բերէ, եւ զաւգնածութիւնն փանի եւ զցաւն խաղուցնէ, եւ զքամին յանձնէն վարէ, որ թանձր եւ պեղծ է՝ հաւնէ:

Եւ զերկնուն զկալուածն բանայ եւ զանձն թաժայ առնէ: Բայց թէ շար նսրիս՝ զանձն վարուծցնէ, զսիրքն եւ զլերդն հովացնէ: Թէ շուր ելնէ՝ զպալղամն հալէ, եւ թէ ի եղկ ջուրն լվացվիլն, զանձն գէճ առնէ, եւ որոյ ի յանձն չորութիւն յաւելցնէ լինի՝ աւգրէ, եւ որոյ լուծումն լինի՝ աւգրէ»³⁶:

Բժշկարանում ուշագրավ դիտարկումներ կան հիգիենայի մի այլ բնագավառի՝ սննդի հիգիենայի³⁷ (դիետոլոգիա) վերաբերյալ: Ամասիացի բժշկապետը

36 ՄՄ, ձեռ. h⁶⁶ 8871, էջ 24բ-25ա:

37 Սննդի հիգիենան, որպես բժշկագիտության առանձին ոլորտ, ինչպես հայրնի է, ձեւավորվել է ԺԺ. դարում գերմանացի գիտնականներ Մ. Պերենկոֆերի (որ առաջին անգամ իր վրա փորձարկեց խոլերայի վիրբիոնի ազդեցությունը) եւ Կ. Ֆոյրի ուսումնասիրությունների շնորհիվ: Նրանց հետաքրքրությունների շրջանակում էին սննդի որակի, բաղադրության (սննդի մեջ պարունակվող ճարպի, ածխաջրերի, սպիտակուցների, հանքային փարբերի եւ վիտամինների անհրաժեշտ քանակը), սնվելու անհատական ռեժիմի առողջապահական նշանակության խնդիրները (Պ. Заблудовский, История медицины, М., 1981, էջ 200-201): Ներկայումս,

նույնպես շեշտադրելով սննդի որակի և դրա ճիշտ ընտրության կարևորությունը առողջության պահպանման գործում՝ անդրադառնում է ուրտերների համապետելիության խնդրին, ըստ որի՝ նրանց բարեկանոն թե աններդաշնակ համադրումը կարող է դառնալ մարդկանց առողջությանը նպաստող կամ հակառակը՝ հիվանդաժին գործոն. «Այն արև, որ թափա ձուկն ուրես, նայ ի յայն արև պարբասար կաց ի կաթնէն և ի հաւկթէն և ի ոսբէն և քալամէն: Եւ թէ զասօք ի մէկ տեղ ուրես, նայ զմարդն ֆալիճ առնէ և սավրայի հիւրնդոյթին ընծայէ... և այլ դահ անասնոյ ըղղն և հին եղն մի ուրել՝ զեն կու առնէ և մահ գործէ: Եւ քաք հացն, որ ի թոնրոյն ելնէ և զինքն ծածկեն, և որ զպայեաթ կաթն այլ չէ աղէկ: Եւ որ իրք, որ կերակուր է՝ տեսանէս, որ համն փոխեցաւ, մի՛ ուրել»³⁸: Այս դեպքում եւս՝ քարքեր կերակրատեսակների որակական բնութագրումների («քաք», «սառք», «գէճ», «չոր») ու առողջապահական տեսակետից դրանց համապետման խնդրի առումով և, ընդհանրապես, Ամիրդովլաթի առողջապահական հայացքներն ամբողջության մեջ դիտարկելիս չի կարելի չտեսնել բազմաթիվ գուգահեռներ հայ բժշկապետի և անտիկ դասական ու արեւելյան բժշկության քարքեր ուղղությունների առողջապահական հայացքների միջև:

Վերոշարադրածից կարելի է արձանագրել. բժշկագիտության խնդրո առարկա ոլորտների շուրջ Ամիրդովլաթ Ամասիացու հանձնարարականները, ներառելով նախորդ ժամանակների բժշկագիտական պաշարը, նաեւ՝ հարյուրամյակների ընթացքում փորձառություն անցած առողջապահական ժողովրդական ձեռքբերումները, հավելյալ՝ հայ բժշկապետի բարձր մասնագիտական դիտարկումները, լինելով իր ժամանակի համար առաջադիմական՝ համահունչ են առողջապահությանը նպաստող արդիական ըմբռնումներին:

անշուշտ, շատ ավելի ընդգրկուն և բազմաբնույթ է սննդի հիգիենայի ուսումնասիրության դաշտը՝ սննդային թունավոր բակտերիաների հայտնաբերում, օրգանական և անօրգանական միացությունների ազդեցության ուսումնասիրություն, որոնք կարող են սննդի մեջ անցնել կենցաղային առարկաներից, գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատներ, որոնք պարզապես դառնում ոչ միայն սննդային թունավորումների, այլեւ՝ քարքեր բնույթի ախտահարումների:

38 ՄՄ, ձեռ. հ⁶⁶ 8871, էջ 28բ-29ա: